DOI: 10.57192/18291864-2025.3-43

Ալբերտ Վ. Մուշեղյան
Բանաս. գիտ. դոկտոր
albert.musheghyan@yandex.com

ԵՂԻՇԵԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ*

Ամփոփում

Հայ բանասիրության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկի գրության ժամանակի վերաբերյալ: Ըստ նրանում արտացոլված փաստերի՝ ընդունված է, որ այն գրված է մոտ 462–465 թթ.: Հայ ազգային մատենագրական դարավոր ավանդույթը միանգամայն հավաստի է ճանաչում Վարդանանց պատմիչ Եղիշեի վկայությունները՝ դեպքերին ականատես լինելու վերաբերյալ: Սակայն ավելի քան մեկ դար է, ինչ շարունակվում է Եղիշեի մատյանի և Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկի առաջնության շուրջ բանասերների և պատմաբանների միջև ծավալված բանավեճը: Ավարայրի պատմիչ Եղիշեն, հիրավի, իրեղեն և արժանահավատ փաստերի վավերագրման անկանխակալ հեղինակ է: Մինչդեռ Փարպեցին իրերը գնահատում է ժամանակի հեռավորությունից՝ որոշակի գունազարդումով: Այսպես, վերապատմելով Եղիշեի Վարդանանց պատմության հիմնական դրվագները՝ Փարպեցին ջանում է իր նախորդի գործածած բառուբանը փոխարինել հոմանիշ արտահայտություններով կամ փոփոխել՝ ըստ իր ունեցած տեղեկության: Նույնիսկ աշխարհագրական տեղանունները նա հնարավորինս փոխարինում է զուգահեռ անվանումներով:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.11.2025:

Եղիշեի հաղորդած տեղեկությունները Վարդանանց պատերազմի՝ զորքերի և զոհերի մասին թվական տվյալների և բազում այլ մանրամասների վերաբերյալ, նրա իրազեկությունը տեղի ունեցած մերձավոր ու հեռավոր անցուդարձերին, Վարդանանց Պատմությունը դարձնում են իրազեկ գործչի և ականատես հեղինակի ստեղծած վավերական երկ: Իսկ բանաստեղծական զորեղ, պերճաբան խոսքը և վառվռուն երևակայությունը վավերական երկը բարձրացնում են ազգային դյուցազնավեպի աստիճանի:

Մեր կատարած անկողմնակալ, մանրախույզ ուսումնասիրությունը բացահայտում է Եղիշեի առաջնությունը Փարպեցու նկատմամբ ոչ միայն ժամանակագրական առումով, այլև նրանց երկերի բովանդակության մեջ տեղ գտած էական տարբերություններով, որոնք փաստում են Փարպեցու «Պատմության» կախումը Եղիշեի բնագրից:

Բանալի բառեր – Եղիշե, «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի, «Պատմութիւն Հայոց», Ոսկեդար, Վարդան Մամիկոնյան, Ավարայր, պատմագրություն, ժամանակագրություն:

Albert V. Musheghyan
Doctor of Philology

THE TIME OF WRITING OF YEGHISHE'S HISTORY

Absract

In Armenian philology, different opinions have appeared regarding the time of writing of Yeghishe's work "History of Vardan and the Armenian War". According to the facts reflected in it, it is accepted that Yeghishe's History was written around 462-465. The centuries-old Armenian national literary tradition recognizes the testimony of Yeghishe as absolutely reliable regarding author's witnessing the events. However, for more than a century, the debate among philologists and historians over the primacy of Yeghishe's "History of Vardan and the Armenian War" and Ghazar Parpetsi's "History of Armenia" has been going on. Yeghishe as the Avarayr's battle historian, really appears as an impartial author, documenting genuine and reliable facts. Meanwhile, Parpetsi evaluates things from a distance in

time, with a certain coloring. Thus, retelling the main episodes of Yeghishe's Vardanants History, Parpetsi tries to replace the words used by his predecessor with synonymous expressions or change them according to the information he has. He even replaces geographical place names with parallel names as much as possible.

The information reported by Yeghishe regarding the exact dates of the Vardanants war, the troops and victims, and many other details, his awareness of the near and far events that took place, truly make the history an authentic work created by an informed figure and eyewitness author, and his powerful, eloquent poetic speech and vivid imagination elevate the historically authentic work to the level of a national epic.

Our impartial, meticulous study reveals Yeghishe's primacy over Parpetsi not only chronologically, but also in the very significant differences in the content of their works, which prove the dependence of Parpetsi's History on Yeghishe's original.

Key words: Yegishe, "History of Vardan and the Armenian War", Movses Khorenatsi, Ghazar Parpetsi, "History of Armenia", Golden century, Vardan Mamikonyan, Avarayr, historiography, chronology.

Альберт В. Мушегян
Доктор филол. наук

ВРЕМЯ НАПИСАНИЯ ИСТОРИИ ЕГИШЕ

Резюме

В армянской филологии существуют различные мнения относительно времени написания произведения Егише «О Вардане и войне Армянской». Согласно отражённым в нём фактам, принято считать, что История была написана около 462–465 гг. Многовековая армянская национальная литературная традиция признаёт свидетельства Егише как абсолютно достоверные, подтверждающие непосредственное участие автора в современных ему событиях. Однако уже более века среди филологов и историков не утихают споры о первенстве «О Вардане и войне Армянской» Егише и «Истории Армении» Лазаря Парпеци. Историк Аварайрской битвы Егише действительно предстает как беспристрастный автор, документирующий подлинные и достоверные факты. В то же время, Парпеци оценивает события с отстранённой точки зрения, с определённым колори-

том. Так, пересказывая основные эпизоды истории Вардананц Егише, Парпеци старается заменить слова, использованные его предшественником, синонимичными выражениями или изменить их в соответствии с имеющимися у него сведениями. Он даже заменяет географические названия параллельными названиями, насколько это возможно.

Сообщённые Егише сведения о точных датах войны Вардананц, составе войск и жертвах, а также многие другие детали, его осведомлённость о близких и далёких событиях делают историю поистине подлинным произведением, созданным осведомлённым человеком и очевидцем, а его мощная, красноречивая поэтическая речь и живое воображение возносят исторически достоверное произведение до уровня национального эпоса.

Наше беспристрастное и скрупулезное исследование выявляет первенство Егише над Парпеци не только в хронологоческом аспекте, но и в весьма существенных различиях в содержании их произведений, которые доказывают зависимость «Истории» Парпеци от оригинала Егише.

Ключевые слова: Егише, «О Вардане и Армянской войне», Мовсес Хоренаци, Лазарь Парпеци, «История Армении», Золотой век, Вардан Мамиконян, Аварайр, историография, хронология.

Մուտք

Հայ բանասիրության մեջ տարբեր կարծիքներ են արտահատվել Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին»[1] երկի գրության ժամանակի վերաբերյալ: Հ. Գաթրճյանի կարծիքով՝ պատմիչն այն պետք է «գրած ըլլայ 470ին կամ քիչ ետքը» (Գաթրճեան, 1887, 11)[2], քանի որ Աբրահամ Խոստովանողի վախճանը տեղի է ունեցել աքսորված նախարարների դարձից տարիներ անց, իսկ վերջինիս համառոտագրությունից օգտվել է Եղիշեն: Ա. Գարագաշյանը Եղիշեի Վարդանանց պատմությունը անվերապահորեն համարում է V դարի երկրորդ կեսի **ոչ դոյզն մատենագրի գործ**՝ «Ստոյգ է սակայն, թէ Պատմութիւնն յաւնուն Եղիշէի է գործ ոչ դոյզն մատենագրի երկրորդ կիսուն Ե. դարուն: Լեզուն, ազատ հելլենաբանութենէ՝ չունի թարգմանչաց լեզուին նկարագիրը» (Գարագաշեան, 1895, 106):

[1] Հետագա շարադրանքում Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» աշխատութան վերնագիրը բերվելու է «Վարդանանց պատմություն» հապավումի միջոցով:

[2] Մեկ այլ տեղում Հ. Գաթրճյանը նշել է՝ «Եղիշէ՝ յամի 470–475» (Գաթրճեան, 1887, 12):

Անշուշտ, իրավացի է Հր. Աճառյանը՝ մերժելով Ստ. Մալխասյանցի առաջ քաշած դասակարգման նոր եղանակը, ըստ որի՝ Եղիշեն Վարդանանց Պատմությունը գրել է Ագաթանգեղոսի Պատմությունից առաջ, քանի որ Վարդանանց պատմիչը չգիտե և ոչ մի անգամ չի հիշատակում Գրիգոր Լուսավորչին (Մուշեղյան, 2012)։ V դարի հեղինակների ժամանակագրական դասակարգման համար մեծանուն լեզվաբանը հիմք է ընդունում ոչ թե Գրիգոր Լուսավորչի անվան հիշատակումը, այլ նախկինում ընդունված դասական եղանակը՝ հենված Ոսկեդարյան գրաբարի լեզվաոճական ուրույն հատկանիշների վրա (բառագանձ, քերականական բուն հայկական համակարգ և այլն)։

Դեռ 1945 թվին պատասխանելով Մալխասյանցին՝ Աճառյանը մատնանշում էր. «Ենթադրենք, թե մենք այժմ խախտում ենք 460 թվի սահմանը և տանում ենք ավելի առաջ, օրինակ, մինչև 475 թ. – այս դեպքում Աբգարը[3], Ագաթանգեղոսը և Փավստոսը կմնան Ոսկեդարի (նոր) սահմանում, բայց ի՞նչ կանենք Եղիշեն։ Իր լեզվով Եղիշեն Ագաթանգեղոսից, Աբգարից ու Փավստոսից *անպատճառ* հետո է, ուր մնաց թե նրանց ժամանակակից և նույնիսկ ավելի առաջ» (Աճառյան, 1945, 47–50; Աճառյան, 1976, 204)։

1. Բանավեճ Եղիշեի և Ղազար Փարպեցու երկերի առաջնության շուրջ

Ագաթանգեղոսի Պատմության և Կորյունի «Վարք Մաշտոցի»-ի բնագրական փոխառնչության հարցին զուգահեռ՝ ավելի քան մեկ դար է, ինչ շարունակվում է Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» մատյանի և Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ի առաջնության շուրջ բանասերների և պատմաբանների մեջ ծավալված բանավեճը։ Հայ ազգային մատենագրական դարավոր ավանդույթը միանգամայն հավաստի է ճանաչում Վարդանանց պատմիչ Եղիշեի վկայությունները՝ դեպքերին ականատես լինելու վերաբերյալ։ Քանի որ նրա շարադրանքն ավարտվում է Հազկերտ Բ-ին հաջորդած Պարսից Պերոզ թագավորի 5-րդ տարվա դեպքերով, ըստ այսմ էլ ընդունված է, որ Եղիշեի Վարդանանց Պատմությունը գրված է մոտ 462–465 թթ։

[3] Նկատի ունի Թադեոս առաքյալի Վկայաբանությունը։

Ղազար Փարպեցին (ծնվ. մոտ 440–443թթ.) V դարի միակ երջանիկ հեղինակն է, որը չի տեղաշարժվել իր ապրած ժամանակից, ուստի և նրա «Պատմութիւն Հայոց»-ը, որի երկրորդ դրվագը (իմա՝ գիրքը) նվիրված է Վարդանանց ապստամբությանը, ինչպես Եղիշեի երկը, անփոփոխ և միահամուռ ընդունված է բոլոր ուսումնասիրողների կողմից իբրև V դարի վերջի կամ VI դարի սկզբի գրվածք: Այսպես էլ ավանդաբար լուծվել է երկու պատմիչների փոխառնչության հարցը և նրանց պատմական երկերի տեղը V դարի հայ մատենագրության դասակարգման շղթայում: Այստեղից հետևում է, որ Փարպեցին պետք է լիովին օգտված լիներ Եղիշեի Վարդանանց պատմությունից: Միաժամանակ հարկ է ընդունել նաև, որ Ղազարը լրացուցիչ տեղեկություններ է քաղել նաև Ավարայրի պատերազմում ողջ մնացած և պարսկական աքսորից վերադարձած նախարարներից, հատկապես՝ Արշավիր Կամսարականից:

Հակառակ սրան՝ ձգտելով լույս սփռել Եղիշեի անձին և ինքնության վրա, ոչ միայն հաջորդ պատմիչները, այլև հետագա ուսումնասիրողները իրենց հեռուն միտող ենթադրություններով, որոնք հաճախ զուրկ են որևէ հիմքից, միայն հեռացել են հարցի քննությունից:

XIX և XX դարերի հայ և օտարազգի հետազոտողների միջև բորբոքվեց մի սուր բանավեճ, թե Հայոց ապստամբությունը և Ավարայրի ճակատամարտը պատկերող երկու հեղինակներից ով է առաջինը, այսինքն՝ Ղազա՞րն է օգտվել Եղիշեից, թե՞ հակառակը: Մի շարք բանասերներ (Գրիգոր Տեր-Պողոսյան, Բաբկեն Կյուլեսերյան, Աբրահամ Զամինյան, Ներսես Ակինյան, ընդհուպ մինչև Ռոբերտ Թոմսոն) իրենց երկարաշունչ ուսումնասիրություններում ջանում են ապացուցել, որ Ավարայրի էպոպեայի նախընծա պատմիչը մարզպան Վահան Մամիկոնյանի սննդակից Ղազար Փարպեցին է, որը մանկությունից վերահասու է եղել Հայոց ապստամբության մանրամասներին, ինչպես նաև Մամիկոնյան տոհմի հետ կապված զրույցներին: Այս պատճառով էլ Փարպեցու հետ ունեցած թե՛ նույնություններում և թե՛ հակասություններում միշտ մեղավոր է ճանաչվում Եղիշեն: Առաջ տանելով այս տեսակետը՝ այդ հետազոտողները Եղիշեին և նրա պատմական երկը տեղադրում էին Փարպեցուն հաջորդած հարյուրամյա ժամանակահատվածում՝ VI դարի 1-ին կեսից մինչև VII դարի 1-ին կեսը: Ուստի անխուսափելիորեն պետք է հանգեին այն հետևությանը, թե իբր կեղծ են Եղիշեի հավաստիացումները, որ ինքը ականատես է եղել իր պատմած դեպքերին: Ցավոք, ընդհանրախոսությունը գրաքննադատության անբաժան ուղե-

կիցն է և այլ հեղինակներին ու հաջորդ ժամանակներին փոխանցվելու հատուկ ընդունակություն ունի:

Հատկապես ուշագրավ է (բառիս բացասական առումով) Ն. Ակինյանի բերած «ավանդը», որի մի շարք հրապարակումներում Եղիշե պատմիչին ու նրա երկը նսեմացնելու միտումը հասնում է խեղաբանության: Ըստ Ակինյանի՝ գոյություն է ունեցել (միայն իրեն հայտնի) մի պատմություն՝ 572 թ. Վարդան Մամիկոնյանի (Կարմիր Վարդան) ապստամբության մասին ընդդեմ Պարսից, որին հաջորդել է իրանա-բյուզանդական 20-ամյա պատերազմը: Այնուհետև, Ակինյանի ենթադրությամբ՝ VII դարում Եղիշե անունով մի գեղծարար, Փարպեցու «Հայոց պատմության» Բ դրվագի հիման վրա, խմբագրել է Կարմիր Վարդանի մասին հիշյալ պատմությունը և հարմարեցրել 451 թ. Վարդան Մամիկոնյանի ապստամբությանը: Այնպես որ Եղիշեի պատկերած Հազկերտ Բ արքայից արքան իրականում մեկ դար հետո գործած «Խոսրով Ա Անուշառվանը կրնա ըլլալ» (531-579)՝ Բյուզանդիայի և քուշանների դեմ կատարած իր արշավանքով: Այս, հիրավի, խեղաբանությունն Ակինյանը նախանձելի համառությամբ կրկնել է տասնամյակներ շարունակ՝ «Հանդէս ամսօրեայ»-ում հրապարակած իր երկարաբան ուսումնասիրություններում (համահավաք հրատարակությամբ տե՛ս Ակինեան, 1932, 1936, 1960):

Պրոֆեսոր Ռ. Թոմսոնը Եղիշեի և Փարպեցու առնչության հարցին անդրադարձել է նրանց պատմական երկերի անգլերեն թարգմանության ներածություններում: Դեպքերին ականատես լինելու մասին Եղիշեի վկայությունները համեմատելով Փարպեցու այն պնդումների հետ, թե վերջինս Վարդանանց ապստամբության մասին տեղեկությունները քաղել է վերապրած մասնակիցներից, անգլիացի պրոֆեսորը մատնանշում է, որ հիմքեր կան Եղիշեի երկը տեղադրելու ավելի ուշ, քան 5-րդ դարը (Eḷishē, 1982, 27-29; Pʻarpecʻi[4], 1991, 12): Մեկ այլ անգամ Թոմսոնն ավելի որոշակի նշում է, որ Եղիշեի երկը շարադրված է Փարպեցուց ավելի քան մեկ դար հետո. «Ղազարի պատմությունը որևէ անմիջական արձագանք չի ունեցել հայ մատենագրության մեջ: Այն ավելի քան մեկ դար վաղ է գրված, քան մի այլ պատմիչ կանդրադառնար այդ թեմային» (Eḷishē, 1982, 30; Pʻarpecʻi, 1991, 18):

[4] Միանգամայն անհասկանալի է, երբ Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ը, որը միջնադարյան բոլոր ձեռագրերում ունի սույն վերնագիրը, իր անգլերեն թարգմանության մեջ Թոմսոնն անվանում է սոսկ “The History of Łazar Pʻarpecʻi” – «Ղազար Փարպեցու պատմություն»:

Թոմսոնը իրազեկ է նաև, որ VII դարի երկրորդ կեսին գրված Սեբեոսի Պատմության նախաբանում ակնարկներ կան Վարդան Մամիկոնյանի ապստամբության և Վարդանի դերի մասին, որոնց հիմքը Եղիշեի Վարդանանց պատմությունն է (Eḷishē, 1982, 30): Բայց այսպես նշելով՝ անգլիացի հայագետը ինքն իրեն հարց չի տվել, թե ինչպե՞ս կարող էր Սեբեոսը Փարպեցու սկզբնաղբյուրի փոխարեն հիշատակել նրանից 100 տարի հետո քաղագրած երկրորդական աղբյուրը: Եղիշեի և Փարպեցու համեմատական բնութագրերի մասին նման հետևությունները, պերճախոս վկայությունն են այն բանի, թե որքա՛ն խաբուսիկ կարող են լինել հետազոտողների եզրահանգումները, եթե դրանք կառուցված են ուրիշներից փոխառած և իրենց կանխակալ համոզմունքներին հարմարեցված կարծիքների վրա:

2. Եղիշեի Վարդանանց պատմության առաջնությունը Փարպեցու «Հայոց պատմության» նկատմամբ

Անկողմնակալ, մանրախույզ ուսումնասիրությունը բացահայտում է Եղիշեի առաջնությունը Փարպեցու նկատմամբ ոչ միայն ժամանակի առումով, այլև նրանց երկերի բովանդակության մեջ տեղ գտած էական տարբերություններով, որոնք արձանագրում են Փարպեցու Պատմության կախումը Եղիշեի բնագրից: Այսպես, վերապատմելով Եղիշեի Վարդանանց Պատմության հիմնական դրվագները՝ Փարպեցին ջանում է իր նախորդի գործածած բառուբանը փոխարինել հոմանիշ արտահայտություններով կամ փոփոխել ըստ իր ունեցած տեղեկության: Նույնիսկ աշխարհագրական տեղանունները հնարավորինս փոխարինում է զուգահեռ անվանումներով: Օրինակ՝ Եղիշեն հաղորդում է, թե Վասակ Սյունի մարզպանը, Վրաց և Աղվանից աշխարհների օրինակով, Աղձնիքին էլ հետ պահեց ապստամբների հետ միաբանվելուց և նույն նպատակով հրովարտակ գրեց Հունաց երկիր՝ Ստորին Հայքի սպարապետ Վասակ Մամիկոնյանին, որ հավատարիմ ծառայում էր հոռոմների զորքին Պարսից սահմանի վրա. «քակեաց [Վասակ – Ա. Մ.] և զմիաբանութիւն աշխարհին Վրաց ի Հայոց, և Աղուանիցն ոչ ետ յառաջ խաղալ. և զաշխարհն Աղձնեաց ըստ նմին իսկ օրինակի յետս կալաւ: Գրեաց հրովարտակ և աշխարհին Յունաց, ցուցանելով նոցա այլ ընդ այլոյ ստութեամբ, առ այր մի, որոյ Վասակ անուն էր, յայնց Մամիկոնենից՝ որ կան ի ծառայութեան Յունաց: Եւ ի թշվառութեան ժամանակին այրն այն սպարապետ էր Ստորին Հայոց, և հաւատարիմ զօրացն Հոռոմոց ի

սահմանին Պարսից, և արտաքոյ էր օրինացն Աստուծոյ գործովք իւրովք» (Եղիշէ, 1957, 93):

Իր «Հայոց պատմության» մեջ՝ Եղիշեից քաղած դրվագում, Ղազար Փարպեցին Ստորին Հայք անվան փոխարեն պարզապես թվարկում է այդ նահանգի մեջ մտնող և դրան հարևան գավառները՝ Աղձնիք, Անգեղտուն, Ծոփք, Հաշտյանք, Եկեղյաց. «Եւ [իշխանն Սիւնեաց Վասակ – Ա. Մ.] վաղվաղակի նամականի արարեալ առ կայսր և առ ամենայն աւագանի դրանն Յունաց և առ այլ իշխանս և կողմնակալս, առ բդեշխն Աղձնեաց և առ իշխանն Անգեղ տան, ի Ծոփս և ի Հաշտեանս և յԵկեղեաց և այլ իշխանաց իւրաքանչիւր տեղեաց, և առ մեծ սպարապետն Անտիոքայ» (Փարպեցի, 1904, 63):

Ստորին Հայքի ներքո Ն. Ադոնցը ենթադրում է հայկական ինքնավար սատրապությունները (Հռոմեական տիրապետության տակ անցած Հարավ-Արևմտյան Հայաստանում), և սակայն Փարպեցու մոտ չգտնելով համապատասխան հատվածը՝ Եղիշեի հաղորդած տեղեկությունը համարում է մեկն այն հետսամուտ մակաշերտերից, որոնք չեն խոսում Եղիշեի օգտին՝ իբրև V դարի պատմիչի (Адонцъ, 1908, 126): «Հայտնի է, որ ո՛չ սատրապություններում և ո՛չ էլ Ներքին Հայքում կայսրերը զորք չէին պահում,– շարունակում է Ն. Ադոնցը,– և սահմանների, ինչպես նաև երկրի պաշտպանության գործը դրված էր տեղական ուժերի վրա մինչև 529 թ., երբ Հուստինիանոսն առաջին անգամ նշանակեց Հայաստանի ստրատեգ և նրան ենթակա երեք դուքս: Քանի որ պատմիչը խոսում է Հայաստանում հռոմեական զորքերի սպարապետի մասին, ում էլ հասկանալու լինենք նրա տակ՝ ստրատեգին թե դուքսերից մեկին, այնուամենայնիվ, նրա գիրքը չի կարող գրված լինել 529 թվականից առաջ» (Адонцъ, 1908, 126): Երիտասարդ Ն. Ադոնցի հաղորդած պատմական ճիշտ տեղեկությունը, թե արևելահռոմեական կայսրերը հայկական սատրապություններին էին վստահում տեղական ուժերով Պարսից սահմանը պահպանելու գործը, միանգամայն սխալ է մեկնաբանված նրա կողմից Եղիշեի Վարդանանց պատմության տվյալ կոնտեքստում: Բանն այն է, որ Պատմիչի «այրն այն սպարապետ էր Ստորին Հայոց, և հաւատարիմ զօրացն Հռոմոց ի սահմանին Պարսից» խոսքը (Եղիշէ, 1957, 93), հենց ամենավիճելի տեղում սխալ է թարգմանված Ն. Ադոնցի ռուսերեն աշխատության մեջ՝ «По Елисею, Васакъ Мамиконидъ, сторонникъ марзбана, состоялъ въ то время, то есть въ 451 г., спарапетомъ Нижней Арменіи и *ему были ввѣрены римскія (ромейские – А. М.) войска* на границѣ Персіи» (Адонцъ, 1908, 126): «Հաւատարիմ զօ-

րացն Հոռոմոց» կապակցությունը ամենևին չի նշանակում՝ «նրան էին վստահված [ему были ввѣрены] Հոռոմոց զորքերը», այլ այն, որ սպարապետ Վասակ Մամիկոնյանը հավատարմությամբ էր ծառայում Հոռոմոց զորքին Պարսից սահմանի վրա: Այս սխալ թարգմանության պատճառով բոլորովին կարիք չկար ավելի մեծ սխալ հետևության հանգել՝ Եղիշեին և նրա Վարդանանց պատմությունը 529 թվականից այս կողմ տեղափոխելով:

Բնավ ընդունելի չեն Եղիշեին իր ժամանակից տեղաշարժելու Ն. Ադոնցի փաստարկները, հատկապես, երբ նա ցույց է տալիս, թե Վասակ Մամիկոնյանի անձի մեջ թաքնված է 536 թ. Հուստինիանոսի դեմ ապստամբած հայ իշխանների պարագլուխ ոմն Վասակի հիշատակը, որի մասին պատմում է Պրոկոպիոսը (Адонцъ, 1908, 125): Ի՞նչ նմանություն կարող է լինել VI դարում հռոմեական կայսր Հուստինիանոսի դեմ ապստամբած ըմբոստ իշխանի և V դարի կեսերին հոռոմներին հավատարիմ ծառայողի միջև: Իսկ Ն. Ադոնցի այն դիտողությունը, թե Ղազար Փարպեցին չգիտե Ստորին Հայքի սպարապետ Վասակ Մամիկոնյանին, նույնպես ունի իր բացատրությունը: Եղիշեից տվյալ դրվագը քաղելով՝ շրջահայաց պատմիչը պարզապես զանց է առել Վարդան Մամիկոնյանի հակառակորդ Սյունյաց իշխանի հետ գործակցող Վասակ Մամիկոնյանի անունը, չցանկանալով իր մեկենաս Վահան Մամիկոնյանին ի ցույց դնել նրա նշանավոր տոհմակցի արատավոր վարքը, մինչդեռ անկասելի Եղիշեն ցուցադրում է դա՝ առանց քաշվելու իր պատվիրատու Մամիկոնյան Դավիթ երեցից (Մուշեղյան, 2007, 119–120):

IV դարի վերջին Մեծ Հայքի բաժանումից հետո (387 թ.) Հունաց բաժնում՝ Ծոփաց աշխարհի (այլ կերպ՝ Ստորին Հայքի) սատրապն էր Կամսարական տոհմից Գազավոն ստրատելատը (Խորենացի, 1913, 317–319), որին և ուղղված է Թեոդոս Մեծ կայսեր էդիկտը՝ Gaddanae satrapae Sophanenae[5]: Մեծ Հայքի Պարսից բաժնում թագավոր նշանակված Խոսրով Գ–ի խոստումներից հրապուրվելով՝ Գազավոնը 387 թվին այլ նախարարների հետ փոխադրվեց արևելյան մասը, որից հետո, պետք է ենթադրել, Ծոփաց աշխարհի ստրատելատ–սպարապետի պաշտոնը և զորավարությունը ժառանգաբար անցնում է Սամվել Մամիկոնյանին, որն Արշակ թագավորի մտերիմն էր և իր գնդով հետապնդում էր Արշակի գանձերը հափշտակած Խոսրովի նախարարներին (Խորենացի, 1913, 314): Նա ուրացության համար սպանել էր իր հորը՝ Վահան Մամի–

[5]**Գազավոն** և **Gaddanas** անունների և անձերի նույնացման մասին տե՛ս (Մուշեղյան, 2007, 326):

կոնյանին և մորը՝ Տաճատուհուն, ուստի և մնաց Հունաց կայսր Արկադիոսի մոտ (Խորենացի, 1913, 319): Սրանով պետք է բացատրել, որ V դարի կեսին Ստորին Հայքում (այն է՝ Մեծ Ծոփքում) սպարապետի պաշտոնում տեսնում ենք նույն տոհմից Վասակ Մամիկոնյանին, որը հավանորեն Սամվել Մամիկոնյանի որդին էր, և **Վասակ** է կոչվել ի հիշատակ Սամվելի հորեղբոր՝ անձնուրաց սպարապետ Վասակ Մամիկոնյանի, որին Պարսից թագավոր Շապուհ Բ–ն խաբեությամբ Հայոց Արշակ թագավորի հետ Տիգբոն էր հրավիրել և մորթազերծ անելով՝ պաճուճապատանը դրել Անհուշ բերդում շղթայված Արշակ թագավորի աչքի առաջ:

«Մովսես Խորենացու դարը» մենագրության մեջ մենք ցույց ենք տվել, որ V դարում գոյություն ունեցած «Աշխարհացոյց»–ի սկզբնական բնագրում Մեծ Հայքի առաջին և երկրորդ աշխարհները կոչվել են հակոտնյա անուններով՝ «Ա աշխարհ՝ Բարձր Հայք, այսինքն Կարնոյ քաղաք» և «Բ աշխարհ Հայոց՝ Ստորին Հայք, որ է Ծոփաց կողմն» (Մուշեղյան, 2007, 123): VII դարի ենթադրյալ կեղծարարը չէր կարող Փարպեցուց օգտված լինել, քանի որ Բյուզանդիայի Հուստինիանոս կայսրը 536 թվի 31–րդ նովելլայով Ստորին Հայքը (կամ Ծոփաց աշխարհը) վերանվանեց **Չորրորդ Հայք**, որի հետևանքով մեզ հասած VII դարի «Աշխարհացոյց»–ում վերացել է **Ստորին Հայք** հակոտնյա անունը և այլևս չի գիտակցվում **Բարձր Հայք** և **Չորրորդ Հայք** անունների միջև նախկինում եղած աշխարհագրական հակադրությունը: Եթե Եղիշեն V դարի կեսերին գործածած չլիներ Ծոփաց աշխարհի նախկին՝ **Ստորին Հայք** անունը, ապա ոչ միայն Թոմսոնի ենթադրած VII դարի կեղծարար մատենագիրը, այլև ինքը՝ Թոմսոնը, և մենք բոլորս որտեղի՞ց պետք է տեղյակ լինեինք միայն Ավարայրի դեպքերին ականատես Եղիշեի մոտ պահպանված և հետագայում անհետացած աշխարհագրական անվանը:

Ավարայրի պատմիչ Եղիշեն հիրավի անկանխակալ հեղինակ է՝ ականատեսի հավաստի վկայություններով: Մինչդեռ նույն դրվագներում Փարպեցին իրերը գնահատում է ժամանակի հեռավորությունից՝ որոշակի գունազարդումով: Եղիշեի Վարդանանց պատմության երկարամյա ուսումնասիրող և եռանդուն ջատագով Երվանդ Տեր–Մինասյանը, որքան էլ ժամանակային առումով ճիշտ է գնահատում Եղիշեի և Ղազար Փարպեցու առնչության խնդիրը, այսուհանդերձ, նրանց երկերի պատմական արժեքը գնահատելիս շեղվում է իրողությունից և դրանով իսկ ակամայից սողանցք է թողնում Եղիշեի առաջնությունը վի-

ձարկելու համար: Նա գրում է. «Միամտության արդյունք է այս երկու հեղինակների երկերը իբրև **պատմական գրվածքներ** միմյանց հետ համեմատելը և մեկի առավելությունները մյուսի վերաբերյալ ցույց տալը, որովհետև դրանք բոլորովին տարբեր բնույթի և տեսակի երկեր են, որոնց երբեք չի կարելի միևնույն չափանիշով մոտենալ: Ղազար Փարպեցու գրվածքն **իսկական պատմություն է,** որի նպատակն է պատմական երևույթների ծագումն ու զարգացումը նկարագրել, իսկ Ե-ղիշեի երկը, պատմական նյութ ունենալով հանդերձ, **մի բանաստեղծություն է՝** լի քնարական սրտաբուխ զեղումներով, որի նպատակն է «սիրելիների համար մխիթարություն, հուսացողների համար հույս և քաջերի համար քաջալերություն լինել»[6] նեղ օրերում» (Տեր-Մինասյան, 1971, 127-128)[7]: Ահա և Ե. Տեր-Մինասյանի մատնանշած մի ավելի ցայտուն հակադրություն. «բայց այն (Եղիշեի երկը – Ա. Մ.) իսկապես ասած մի սովորական պատմություն չէ, այլ վկայաբանական գունավորում ստացած մի պատմական դյուցազներգություն [...], որ գրված է խիստ որոշ նպատակով – «որպեսզի շարունակ կարդաս՝ լսելով առաքինի անձերի քաջությունը և հետ կացածների վատթարությունը»[8] [...] որի հետ երբեք չի կարող համեմատվել ժամանակ անցնելուց հետո սառնությամբ ամեն մանրամասնություն կշռադատած ու գրված որևէ իսկական պատմական երկ, ինչպիսին այս դեպքում Ղազար Փարպեցու գրվածքն է» (Տեր-Մինասյան, 1971, 127):

Բայց ո՞ր հեղինակը գիրք գրելիս նպատակ չի հետապնդում, որ ընթերցողները շարունակ կարդան իր գրածը: Մի՞թե Մովսես Խորենացին էլ իր ծանրակշիռ «Հայոց պատմությունը» չի գրել հենց նրա համար, որ իր հայրենակիցները հաճախակի և անհագուրդ կարդան իրենց ազգի ու հայրենիքի պատմությունը: Տեսե՛ք, թե Պատմահայրն ինչ է գրում՝ Եղիշեին հար և նման. «Այլ որչափ ջան և յիշողութիւնք բաւեցին՝ պատմեցաք ստուգապէս [...] հասարակաց խօսիւք անցանելով ընդ պատմութիւնս, որպէս զի մի՛ ոք երեւեսցի ի պերճաբանութիւնս գրաւեալ առ փափագն, այլ ճշմարտութեան բանից մերոց կարօտեալ՝ **ստէպ ստէպ և անյագ առնիցեն զընթերցումն պատմութեանց մե-**

[6] Չակերտներում ներկայացված խոսքերը Եղիշեի Վարդանանց պատմության նախաբանից են. «[...] յօժարութեամբ ձեռնարկեցաք զայս ինչ, որ է *մխիթարութիւն սիրելեաց և յոյս յուսացելոց, քաջալերութիւն քաջաց*» (Եղիշէ, 1957, 4-5):

[7] Մեջբերման ընդծումներն մերն են – Ա. Մ.:

[8] Համմտ.՝ «[...] զի հանապազորդ ընթեռնուցուս, լսելով զառաքինեացն զքաջութիւն, և զյետս կացելոցն զվատթարութիւն» (Եղիշէ, 1957, 4):

րոց հայրենեաց» (ընդգծումը մերն է – Ա. Մ.) (Խորենացի, 1913, 257–258):

Բացի այդ՝ պատմական նյութի մշտական գաղափարը և ոճը, ջերմությունն ու սառնությունը երբեք չեն կարող վկայել որևէ երկի ուշ կամ շուտ գրված լինելու մասին: Պաթետիկ, վերամբարձ ոճով գրված շատ ներբողյաններ հյուսված են նկարագրվող պատմական դեպքերից շատ դարեր հետո: Բայց այստեղ մեր հիմնական առարկությունն այլ խնդրի է վերաբերում: Միանգամայն սխալ կլիներ Եղիշեի Վարդանանց պատմությունը գնահատել իբրև **վկայաբանական** գրվածք: Թեև Եղիշե պատմիչն իր հերոսների նահատակությունը պատկերում է բանաստեղծական ոգեշունչ տողերով, սակայն հեռու է կրոնական վկայաբանության պաթոսից – դյուցազներգությունը չի կարող կապ ունենալ **անդրկողմյան կյանքի, մեռնելու երանության** սևեռուն գաղափարի հետ: Հայ մատենագիր-պատմիչները՝ սկսած մեր պատմագրության անդրանիկ երկից՝ Ագաթանգեղոսի Պատմությունից, միշտ ուսուցանել են **աշխարհում քաջի անուն թողնելու** պատվիրանը. «նոքա են որ չարչարեալք վասն Տեառն իւրեանց մեռան, և ի կենդանութիւն փոծեցան, և **զանուն և զօգուտ պտղոց իւրեանց քաջութեան յաշխարհի թողին»** (ընդգծումը մերն է – Ա. Մ.) (Ագաթանգեղոս, 1909, 7),– գրում է Ագաթանգեղոսի Պատմության հեղինակն Առաջաբանում, և նկատի առնելով քաջության անուն թողած հերոսներին՝ ավելացնում է. «**շինութիւն աշխարհի՝ յԱստուծոյ նոցա բարեխօսութեամբ է շնորհեալ.** զի գութ աստուածութեանն ի նոսա իջեալ՝ ողորմութիւն և քաւութիւն շնորհէ աշխարհի» (ընդգծումը մերն է – Ա. Մ.) (Ագաթանգեղոս, 1909, 8):

3. Վարդան Մամիկոնյանը և նրա զինակիցները V դարի հայ պատմագրության մեջ

Ըստ Ագաթանգեղոսի Պատմության՝ նահատակությունն ինքնանպատակ չէ, այլ աշխարհը՝ հայրենի երկիրը, շեն պահելու խորհուրդ ունի իր մեջ, և այդ շեն աշխարհում էլ հարկ է քաջի և արդար մարդու անուն թողնել: Ագաթանգեղոսի Պատմության ավանդած այս պատվիրանն ընդունում և իր հերթին հրահանգում է նաև Եղիշեն, որի վկայությամբ՝ դեռ Ավարայրից առաջ, ապստամբների՝ ամենից ավելի կրկնած խոսքն էր. «Քաջութեամբ միայն մեռցուք, զանուն և զոգիս ևեթ ժառանգեսցուք [...]» (Եղիշէ, 1957, 68): Ավարայրի ճակատամարտի նա-

խընթաց օրը հայ զորականին խրախուսելու համար զորավար Վարդան Մամիկոնյանը Հին Կտակարանից բարձրաձայն ընթերցում էր քաջ Մակաբայեցիների նկարագիրը. «Ջի թէպէտ և ի նմին կատարեցան մահուամբ, սակայն **անուն քաջութեան եկաց մինչև ցայսօր ժամանակի** [...]» (ընդգծումը մերն է –Ա. Մ.) (Եղիշէ, 1957, 105):

V դարի մեր մյուս պատմիչը՝ Փավստոս Բուզանդը, բազմաթիվ հայտնի ու գրեթե անվերծանելի մակդիրներով փառաբանում է Մամիկոնյան տոհմը, որին ըստ նախնյաց կարգի՝ հանձնված էր ստրատելատությունը, սպարապետությունը և զորավարությունը Մեծ Հայքի բովանդակ զորքերի վրա՝ ընդգծելով նրանց ոչ միայն ռազմի հմտությունն ու սխրանքը, այլ ոչ պակաս նաև՝ քաջի անուն, բարի համբավ թողնելու նրանց տոհմիկ առաքինությունը. «[...] աներկիւղք քաջասիրտք նահատակք քաջանունք, բարենշանս բարեհամբաւք բարեգործք յաջողակք ՚ի գործ պատերազմաց ՚ի բուն ՚ի նախնեացն կարգաց ՚ի Մամիկոնեան ազգին, ՚ի վերայ իշխանութեանն բովանդակ՝ ՚ի վերայ ամենայն զօրավարութեանն բազմութեանն Հայոց մեծաց, հանապազ յամենայն ժամ յաղթող ազգին **պարգեւեալ յերկնից բարիանուն** իրաքաջ ՚ի մեծի նահապետութեան պատերազմի» (ընդգծումը մերն է – Ա. Մ.) (Փավստոս, 1987, 106): Ուրեմն ըստ Փավստոսի՝ Մամիկոնյան հաղթող տոհմին երկինքն էր պարգևել բարի անուն և քաջություն:

Եղիշեի Վարդան սպարապետը՝ իբրև Բուզանդի փառաբանած Մամիկոնյան տոհմի արժանի զավակ, Ավարայրի դաշտում հայ նախարարների և զորքի առջև արտասանած ճառում հայ զորականին ոչ թե ոգեշնչում է երկնային կյանքի երանությամբ, այլ հորդորում **քաջի անուն թողնել հենց երկրի վրա,** որով և **անմոռաց կլինեն** նաև երկնքում, և իբրև օրինակ՝ Վարդանը վկայակոչում է Հին Կտակարանից Հուդա և Մատաթիա Մակաբեներին. «ո՛րպէս մարտուցեալ կռուեցան ի վերայ աստուածատուր օրինացն ընդդէմ թագաւորին Անտիոքացւոց: Ջի թէպէտ և ի նմին կատարեցան մահուամբ, սակայն **անուն քաջութեան եկաց մինչեւ ցայսօր ժամանակի, ո՛չ միայն յերկրի, այլև անմոռաց յերկինս**» (ընդգծումը մերն է – Ա. Մ.) (Եղիշէ, 1957, 105):

Իսկ Ագաթանգեղոսի Պատմությունը, հակառակ իր խորոգեշունչ քրիստոնեական ոգուն, փառաբանում է նույնիսկ հեթանոս արքա **սեզ Տրդատի** հայրենանվեր քաջությունը. «Մեծ անուն պարծանաց քաջութեան անձին ստանայր, և զհոյակապ շքեղութիւն յաղթութեան ընդ ամենայն աշխարհ կացուցանէր» (Ագաթանգեղոս, 1909, 71):

Եղիշեի ոգեշունչ Մատյանում Վարդան Մամիկոնյանի կերպարը կերտված է իբրև իրական կենդանի զորավարի՝ չնայած պատմիչի բանաստեղծական հուզառատ ոճին ու ոգուն: Իր պաշտելի սպարապետին նա ոչ մի անգամ սուրբ կամ երանելի չի անվանում՝ հակառակ Ղազար Փարպեցու, այլ վերաբերում է նրան իբրև կատարյալ աշխարհիկ անձի և կենդանի գործող մարդու՝ բնորոշելով նրան միայն զորավարին վայել մակդիրներով՝ **մեծ, առաքինի, արի, քաջ, կորովի**, ինչպես հետևյալ օրինակներում. «իբրեւ ետես **մեծն** Վարդան», «զայս ամենայն **առաքինի** զօրավարն խօսեցաւ», «իսկ **արին** Վարդան յառաջ մատուցեալ», «ի վեր հայեցաւ **քաջն** Վարդան», «իսկ **կորովին** Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն», «յազգէն Մամիկոնէից **քաջն** Վարդան» (Եղիշէ, 1957, 99–120):

Նույն պատկերը նկատում ենք և Ավարայրում նահատակված նախարարների դեպքում: Եղիշեն այստեղ, զոհված 9 նախարարներին թվարկելիս, նրանցից յուրաքանչյուրին զատ-զատ մեծարում է ռազմի կորովը կամ բնավորությունը հատկանշող ուրույն մակդիրներով՝ **Քաջն Վարդան, Խորէնն Կորովի, Արին Արտակ, Զարմանալին Տաճատ, Իմաստունն Հմայեակ, Հրաշակերտն Ներսեհ, Մանուկն Վահան, Արդարն Արսէն, Յառաջադէմն Գարեգին** (Եղիշէ, 1957, 119–120): Մինչդեռ Փարպեցին, Եղիշեից քաղելով նահատակված ինը նախարարների նույն ցուցակը, բացի Սուրբ Վարդանից, մնացյալ նախարարներին զատ-զատ միմիայն երանելի է անվանում՝ Եղիշեի բազմապիսի մակդիրների փոխարեն – **սուրբն** Վարդան, **երանելին** Խորէն, **երանելի** սեպուհն Արտակ, **երանելին** Տաճատ, **երանելին** Հմայեակ, **երանելին** Ներսեհ, **երանելին** Վահան, **երանելին** Արսէն, **երանելին** Գարեգին (Փարպեցի, 1904, 72): Այստեղից էլ հետևում է, որ Ավարայրում զոհված ինը նախարարներից միայն սպարապետ Վարդան Մամիկոնյանն է **սուրբ** հռչակված եղել:

Նույնիսկ Ավարայրի ճակատամարտում հերոսաբար նահատակվելուց հետո էլ Եղիշեն Վարդանին «սուրբ» կամ «երանելի» չի կոչում: Մի անգամ միայն՝ ընդհանուր ձևով, ճակատամարտում զոհված հայ նախարարների ու ռազմիկների մասին գրում է. «վասն այնորիկ և ոչ կարէին կալ ճշմարտիւ ի վերայ սուրբ մարմնոց **երանելեացն**» (Եղիշէ, 1957, 118)*:* Վարդանը «սուրբ» կամ «երանելի» չի կոչված մինչև իսկ այն ժամանակ, երբ Ապար աշխարհի հավատափոխ պարսիկ մոգպետը գիշերային սքանչելի տեսիլքում Հայոց նահատակների գնդի մեջ ճանաչում է Վարդան Մամիկոնյանին, Արտակ Պալունուն և Խորեն Խորխո-

ռունուն, որոնք երկնքից իրենց ձեռքին ինը պսակ էին բերում՝ դեռևս չնահատակված Սուրբ Ղևոնդյանց և հավատափոխ մոգպետի համար (Եղիշէ, 1957, 150–151):

Եղիշեի Վարդանանց Պատմության մեջ, ըստ ամենայնի, զգացվում են բանաստեղծ-պատմիչի պաթոսն ու հայրենասերի կիրքը, մինչդեռ Փարպեցուն կարդալիս ընթերցողին շարունակ ճնշում է վկայաբանին բնորոշ նահատակության ընդգծված պաթոսը: Հակառակ Եղիշեի հանդեպ ունեցած իր անհանդուրժող կեցվածքին՝ արգենտինահայ պատմաբան Հրանդ Արմենն ինքն է հաստատում, թե ի տարբերություն Եղիշեի՝ Փարպեցին որքա՞ն նոր հոգևոր մակդիրներ է փակցնում Վարդան Մամիկոնյանին. «Ղազար երբ Վարդան Մամիկոնեանի անունը պիտի յիշէ, միմիայն զայն սրբացնելով կը գոհանայ, այսպէս՝ Ջսուրբն Վարդան: Ջսուրբ սպարապետ: Սրբոյ առն Վարդանայ: Սուրբ այրն Աստուծոյ Վարդան: Այրն Երանելին, եւ այլն» (Արմէն, 1969, 32)[9]: Եվ դա հենց այն նույն դրվագներում, որտեղ Եղիշեն նրան պարզապես զորավար է ներկայացնում: Ասենք նաև, որ Փարպեցու գրքում դեռևս կենդանի, գործող, զենքը ձեռքին մարտնչող Վարդան սպարապետը հենց սկզբից ներկայացվում է իբրև երանելի նահատակ՝ սրբի լուսապսակը ճակատին: Տպավորությունն այնպիսին է, թե հայ իշխանների, զորականների ու ժողովրդի հետ խոսում ու շփվում է ոչ թե կենդանի անձը, այլ **Սուրբ Վարդան նահատակը:**

Այս տեսակետից չափազանց ուշագրավ է Փարպեցու Պատմության մեջ Վարդան Մամիկոնյանի և նրա երկու եղբայրների հենց առաջին հիշատակումը, որտեղ Սահակ Պարթևի փեսա, սպարապետ Համազասպ Մամիկոնյանից ծնված երեք որդիներին Փարպեցին արդեն իսկ **սուրբ** և **երանելի** է անվանում. «Եւ վասն զի ոչ գոյր իւր [Սահակայ հայրապետի – Ա. Մ.»] արու որդի, բայց միայն դուստր մի, զոր էր տուեալ կնութեան Համազասպայ տեառն Մամիկոնէից և Հայոց սպարապետի, որ ծնաւ ի Համազասպայ երիս արու որդիս, զսուրբն Վարդան և զսուրբն Հմայեակ և զերանելին Համազասպեան» (Փարպեցի, 1904, 37): Կնշանակի, այս տողերը գրելու պահին՝ V դարի վերջին, Վարդան և Հմայակ Մամիկոնյանները Հայ Եկեղեցու կողմից արդեն սրբերի կարգն էին դասվել, իսկ նրանց երրորդ՝ կրտսեր եղբայրը վախճանված պետք

[9] Բացի հեղինակի նշած մակդիրներից, Փարպեցին սպարապետին հիշատակում է նաև որպես՝ «սուրբ զաւրավարն Հայոց», «երանելոյ զաւրապետին Հայոց», «արթուն եւ քաջ նահատակն Վարդան»:

է լիներ. **երանելի** մակդիրը Փարպեցին գործածում է բացառապես վախճանված կամ զոհված անձանց վերաբերյալ:

Եղիշեի հերոսը՝ հոգևորական թե ռազմիկ, պատրաստվում է նահատակվել և իրոք էլ նահատակվում է հավասարապես Հայ Եկեղեցու և հայրենի երկրի ազատության համար: Եկեղեցին և երկիրը Եղիշեի համար միասնական են, ինչպես հոգին ու մարմինը, և թշնամին հենց այդ միասնությունն է ցանկանում պառակտել՝ Հայոց աշխարհում զրադաշտականություն տարածելու, ժողովրդին բռնի հավատափոխ անելու իր դիվային ծրագրով, որին Հայաստանում դիմագրավում են թե՛ հոգևորականը, և թե՛ աշխարհականը: Եղիշեն մեծ հմտությամբ ցույց է տալիս, թե ինչպես Հովսեփ կաթողիկոսը և նրա հետ եղած Սուրբ Ղևոնդյանք, Մուշկան Նիսալավուրտի և Վասակ Սյունու ձեռքը գերի ընկնելուց հետո, գրավոր բողոք են հղում Պարսից արքունիք՝ ոչ թե իրենց անձերի փրկության, այլ Հայոց աշխարհը շեն պահելու համար. «Քանզի ոչ եթէ ակնկալութիւն ինչ էր երանելեացն ըստ մարմնաւոր կենացս, այլ իմաստութեամբ հնարս խնդրէին լինել փոխանակ ամենայն աշխարհին շինութեան» (Եղիշէ, 1957, 123): Իսկ նույն ամրոցում եղած երկու հարյուր տասներեք աշխարհականները նահատակվում են հանուն **շեն եկեղեցիների, անքակ տաճարների և Սուրբ Եկեղեցու** միաբանության:

Հոգևորականների ու աշխարհականների այս փոխադարձ ինքնազոհաբերումը, որ նույն դրվագում խորաթափանց կերպով ցուցադրում է Եղիշեն, բացահայտում է Եկեղեցու և Հայրենիքի, հոգու և մարմնի փոխադարձ, անքակտելի կապը՝ հոգևորականը մարտնչում էր երկրի, իսկ աշխարհականը՝ Եկեղեցու համար: Եղիշեն փառաբանում է նահատակությունը՝ ոչ իբրև սոսկ **ինքնազոհաբերում**, այլ որպես **սխրանք, հերոսություն**՝ հանուն Հայոց Եկեղեցու և հայրենի երկրի՝ առավելապես ի ցույց դնելով բառիս բազմակի նշանակությունը և հատկապես այս վերջին՝ «քաջագործություն» իմաստը. «[...] քանզի բազմադիմի է նահատակութեանդ անուն, և նա բազմադիմի շնորհս բաշխէ ամենեցուն» (Եղիշէ, 1957, 5): Եվ քաջերին քաջալերելու համար նա վկայակոչում է հաղթության զորագլուխ Քրիստոսին իր անպարտելի զորությամբ. «[...] զզօրագլուխն յաղթութեան, որ և ոչ ումեք ոտնհար լիցի թշնամութեամբ, այլ ամենեցուն ուսուցանէ զիւր անպարտելի զօրութիւնն» (Եղիշէ, 1957, 5): Եվ ինչպես վկայում է ականատես պատմիչը՝ հենց այսպիսի հերոսությամբ հերոսացավ և Հայոց աշխարհը. «Որպէս

յայսմ ժամանակի տեսաք աչօք մերովք, զի զնոյն նահատակութիւն նահատակեցաւ և աշխարհս Հայոց» (Եղիշէ, 1957, 99):

Դրան հակառակ՝ Ղազար Փարպեցին քարոզում է նահատակություն՝ բառիս զուտ «մահապարտություն» իմաստով, այն աշխարհում երանության հասնելու համար: Փարպեցին առիթը չի փախցնում արտահայտելու կամ ցուցադրելու երանելի Վարդան սպարապետի և նրա զորքի՝ **ուխտապահների** շուտափույթ նահատակվելու բաղձանքը, զորք, որ գլխապատառ նետվում է ընդունելու թշնամու զորքի բերած երկնավոր պսակները: Ձմռան ցրտաշունչ օրերն անցնելուց հետո, – պատմում է Փարպեցին, –մեծ Ջատկի տոնը՝ Կենարարի Հարությունը, խաղաղությամբ և ուրախությամբ տոնելուց սակավ օրեր անց, լսեցին, թե անհամար պարսից զորք է եկել Հեր և Ջարևանդ գավառը, և Հայոց երանելի սպարապետ Մամիկոնեից տեր Վարդանը կոչ ուղարկեց ուխտապահներին, որոնք տոն օրերի առթիվ գնացել էին իրենց տները՝ Ջատկի տոնն իրենց ընտանիքների հետ կատարելու[10], թե «Գունդ բազում հասեալ գայ, բերելով աստուածասիրացն պսակս երկնաւորս. արդ՝ որ ոք ցանկայ առնուլ՝ աճապարեցէ՛ք, զի մի՛ վրիպեսցի ոք և զղջանայցէ: Եւ եթէ ոք խորհի այլազգ ինչ, որպէս և այլքն, որք խոտորեցան զկնի սատանայի՝ դադարեալ հանգիցէ՝ ուր և թուեսցի հաճոյ ումեք: Քանզի ոչ ոք պսակի ընդ ընկերաց իւրոց՝ թէ ոչ տանջի. այլ իւրաքանչիւր ոք անձին իւրում գանձէ զհողողէնսս և զյաւիտենականսն» (Փարպեցի, 1904, 68):

Ավելին, ըստ Փարպեցու՝ երանելի սպարապետ Վարդան Մամիկոնյանը Առանձար սեպուհին ուղարկում է ոչ միայն լրտեսելու Պարսից զորքի թվաքանակը, այլև այն նպատակով, որ «եթե հնար լինի՝ գրգռեն նրանց, որ շուտափույթ գան և բերեն մեզ արքայության պսակները, որ նրանց ձեռքով պարգևում է մեզ Փրկիչ Քրիստոս՝ հավիտենական բարութեանց տվողը» – «առաքէր երանելի սպարապետն Հայոց Վարդան, միաբանութեամբ աւագանւոյն որ ընդ նմայն էին, սեպուհ մի յազգէն Ամատունեաց, որում անուն էր Առանձար, իբրև երեք հարիւր հեծելով՝ երթալ, լրտեսել զբազմութիւն զօրացն Պարսից, և տալ գրգիռս, եթէ հնար իցէ, առ ի փութապէս, ասէ, գալ բերել մեզ զպսակս արքայութեան, զոր ի ձեռն նոցա պարգևէ մեզ Փրկիչն Քրիստոս, յաւի-

[10] Բ. Ուլուբաբյանը այս հատվածը աշխարհաբար թարգմանել է որպես սպարապետի ուղիղ խոսք՝ հրամայական եղանակով. «...որոնք տոնի օրերի պատճառով իրենց տներն էին գնացել, թե՝ զատկի տոնը կատարեցեք ձեր ընտանիքների հետ» (Փարպեցի, 1982, 161):

տենից բարութեանցն տուիչ» (Փարպեցի, 1904, 68–69): Իսկ թե ինչու է Փարպեցին Եղիշեից քաղած սույն դրվագից ջնջել Ամատունյաց Առանձար սեպուհին տրված «լի իմաստութեամբ և քաջութեամբ» բնորոշումը (Եղիշէ, 1957, 105), միանգամայն պարզ կդառնա, եթե հիշենք, որ Առանձարը Վահան Ամատունի հազարապետի տոհմակիցն էր, որին Ղազարը ներկայացնում է բացասական, ուղղակի վարկաբեկիչ մակդիրներով՝ իբրև **քսու** և **բանսարկու**, որոգայթ լարող: Ուստի և Պարսից վերջապահ գնդի դեմ Առանձարի տարած հաղթանակը Ղազարը վերագրում է ոչ թե նրա իմաստությանը և քաջությանը, այլ Աստծո զորությանը, որ նրանց պարգևեց Փրկիչ Քրիստոս (Փարպեցի, 1904, 69): Այնուհետև Առանձարից և նրա հետ եղողներից լսելով, թե Պարսից զորագլուխներ Մուշկան Նյուսալավուրտը և Դողվճը, անարգել առաջ խաղալով, շուտով կարող են հասնել երկրի միջնաշխարհը. «Զոր լուեալ երանելոյ սպարապետին Հայոց և որ ընդ նմայն էին՝ ևս առաւել ճեպէին երթալ ընդդէմ նոցա. նախ՝ վասն վաղվաղակի **պատահելոյ նոցա ժամու մարտիրոսութեան**. քանզի անձանձրոյթ աղօթէին հանապազ ի տուէ և ի գիշերի, լինել արժանի այնպիսի մասին երկնաւորի. և երկրորդ՝ ասէին, թերևս անդէն ի տեղւոջն ի Հեր և ի Զարևանդ գաւառին վճարին ելք գործոյն պատերազմին» (Փարպեցի, 1904, 69):

Եվ այստեղ Փարպեցին ներկայացնում է մի տարօրինակ դիպված, որի հետքն անգամ չկա և չէր էլ կարող լինել Եղիշեի Պատմության մեջ. «Պենդեկոստեի մեծ տոնի ուրբաթ օրը Հայոց զորքը եկավ, հասավ այն նույն տեղերը (որտեղ Առանձարն էր եղել – Ա. Մ.) և շատ անպատրաստ գտավ Պարսից զորքը. եթե կամենային, երամակարձակ այն ծույլերին կարող էին մեծապես վնաս հասցնել, սակայն հետաձգելով՝ հանգստացան այդ օրը, քանզի նահատակություն փափագողները մտքում չէին դրել հաղթել [միայն նրա համար], որ ամեն օր տեսնեն հոգին կորցրածների ապականումը, այլ միշտ և հանապազ շտապում էին հասնել կոչման կետին ու տենչալի մարտիրոսությանը»:

Նույն ոգով է պատկերում Ղազար Փարպեցին նաև 482–485 թթ. ապստամբության մասնակիցների նահատակությունը: Կուր գետի մոտ մղված ճակատամարտում Վահան Մամիկոնյանի եղբոր՝ Վասակի դեմքին հանկարծ լույս է ճառագում, որից էլ նրա կողքին կռվողները հասկանում են, որ նա նահատակվելու է: «Նրանք, որ այնօր ընդունելու էին նահատակության պսակը, Վերին զորությունը նրանց ցույց տվեց, և նրանք մտքի աչքերով, նահատակությունից առաջ, հայտնապես տեսան իրենց դեմքերի անծածուկ ահագնափոխությունը. բնական մահկանա-

ցու տեսքից փոխվեցին, ընդունեցին վերին զորությունների՝ հրեշտակների կերպարանքը: Մանավանդ Հայոց զորավար Վահանի եղբոր՝ քաջարի Վասակ Մամիկոնյանի դեմքը, որ փառավորվեց Աստծո լուսապսակով, և սրբի շատ ընկեր-նիզակակիցներ, նայելով նրա փայլակնացայտ դեմքին, որ նման էր մեծ մարգարե Մովսեսի փառավորված դեմքին, չէին հագենում դիտելուց: Եվ նրա մեծ եղբայրը՝ Հայոց զորավար Վահանն էլ տեսավ այդ ու սաստիկ զարհուրած՝ անմիջապես հասկացավ, որ սա իրենից ու այս զազրելի կյանքից հեռացել, գնում է հրեշտակների բանակը, և հենց այսպիսին է այն բանակի զորականների տեսքն ու կերպարանքը» (հմմտ. Փարպեցի, 1904, 134):

Եղիշեի պատկերած տեսիլներում նահատակության պսակները Քրիստոս ուղարկում է հրեշտակների կամ սուրբ նահատակների ձեռքով, իսկ Փարպեցու Պատմության մի քանի դրվագներում, ինչպես տեսանք, Հայոց ազգի մարտիրոսության պսակները Քրիստոս ուղարկում է թշնամիների՝ Պարսից զորքի ձեռքով: Հայ զորականը, ըստ Փարպեցու, գերադասում է նահատակվել, այլ ոչ թե հաղթել թշնամուն, և դա նրա համար, որ այլևս չտեսնի **հոգեկորույսների՝** հոգին կորցրածների ապականությունը կամ այս զազրելի կյանքից ազատվելու համար: Այս արտառոց մտայնությունը, որ տեղ է գտել Փարպեցու շատ արժեքավոր պատմական մատյանում և թելադրված է անձնական կյանքում նրա ապրած խոր հիասթափությամբ, խիստ վիճելի և անընդունելի է նույնիսկ IV–V դարերի կրոնադավանաբանական ընկալումների տեսակետից և տրամագծորեն հակառակ է Փարպեցու գրքից ավելի քան մեկ ու կես դար առաջ՝ 330-ական թթ., Հայ Եկեղեցու առաջին հիմնասյուներից մեկի՝ Վրթանես Մեծ քահանայապետի ավանդած պատգամին. «Եւ եթէ զաշխարիս ունիցին արդեւք թշնամիքն, և զիւրեանց զանօրէն զանկրօն զանաստուած կրօնիցն զօրէնս աստ արդեւք հաստատէին, որ, զոր խնդրեմքս, քա՛ւ և մի լիցի: Իսկ մեր բարեպաշտութեան նահատակք ՚ի վերայ այսորիկ ճգնեալ պատերազմաւ, զչար պահեալ հեռացուցեալ հալածեալ յաշխարհէ՝ մեռան, զի մի յայսպիսի աստուածապաշտ և աստուածասէր աշխարհ անօրէնութիւն մտեալ չարի կամացն ՚ի ծառայութիւն արկցէ» (Փաւստոս, 1987, 44): Այսպես էր քարոզում Մեծն Վրթանեսը Պարսից զորքի դեմ հայերի մղած պատերազմում Մեծ Հայքի սպարապետ և զորավար Վաչե Մամիկոնյանի զոհվելու առթիվ:

Մեր պատմիչներից Փարպեցին միակն է, որ հանվանե հիշատակում է Փավստոս Բուզանդին և նրա «Պատմութիւն Հայոց»-ը, ուստի չէր կարող գոնե այստեղից, եթե ոչ Եկեղեցական կանոնադրությունից,

ծանոթ չլինել Վրթանես քահանայապետի այս պատգամին: Ըստ Բուզանդի՝ Մեծ Վրթանեսը օրենք սահմանեց Քրիստոսի համար նահատակված սրբերի կարգը դասելու հենց **երկրի փրկության համար պատերազմում ընկածներին**՝ կանոն դնելով՝ ոչ թե ողբալ միայն նրանց մահը, այլ որ նրանց անունները հիշվեն Աստծո սեղանի առաջ, պատարագի ժամանակ՝ սրբերի անունները հիշատակելուց հետո, իսկ ընկածների հարազատներին հոգ և խնամք տանեն՝ «Որք այնմ ամենայնի փոխանակ զանձինս իւրեանց ոչ խնայեցին, ընդ վկայս Քրիստոսի է նոցա համար պատուոյ: Արդ մի՛ լացցուք զնոսա, այլ պատուեսցուք ընդ ճշմարտութեան, առ նահատակսն դիցուք ընդ աշխարի օրէնս յաւիտեանս յաւիտենից զի ամենայն ոք զսոցա յիշատակ քաջութեան իբրև Քրիստոսի նահատակաց անխափան կատարեսցէ: [...] Եւ եդ օրէնս ընդ աշխարի մեծ քահանայապետն Վրթանէս, զնոցա առնել զյիշատակն ամ յամէ. և որք փոխանակ աշխարհին փրկութեան մեռանիցին ՚ի նմանութիւն նոցա, եդ կանոն՝ յիշել զսոսա առ սուրբ սեղանն Աստուծոյ ՚ի ժամ Պատարագին. յորժամ զանուանս սրբոցն կարգիցեն, և ապա զկնի նոցա զնոցայն. և մնացելոցն յանցելոցն գութ և խնամ կալցին: Զի սոքա, ասէ, ՚ի նմանութիւն Յուդայ և Մատաթեայ Մակաբէի անկան ՚ի ճակատ պատերազմի, և նմանութիւն եղբարց նոցա» (Փաւստոս, 1987, 46):

Եվ հենց Փարպեցին էլ 482–485 թթ. հաղթական ապստամբության նկարագրությամբ մեծապես պանծացրել է Վահան Մամիկոնյանի, Սահակ Բագրատունի մարզպանի և մյուս հերոսների քաջությունն ու անվեհերությունը, որ վերջ ի վերջո արժանապես գնահատում է նաև Պարսից թագավորը՝ ապստամբության ղեկավարին և զորավարին ճանաչելով Հայոց մարզպան:

Եղիշեն աներկբա ցույց է տալիս, որ ազգադավ գործչի արժանի դատապարտողը հենց այն թշնամին է, որին նա ստորաբար ծառայում է – երբ Պարսից թագավոր Հազկերտը Միհրներսեհ հազարապետից տեղեկացավ, թե Վարդան Մամիկոնյանի զորքի ավելի քան վաթսուն հազար թվաքանակի և այլ ռազմական կարևոր տվյալների մասին հաղորդողը Հայոց մարզպան Վասակ Սյունին է, դառնացավ իր հոգում և երդվեց. «Եթէ ապրեսցի անօրէնն այն ի մեծ պատերազմէն, մեծաւ անարգանօք տամ ըմպել նմա զբաժակն դառնութեան մահու» (Եղիշէ, 1957, 97): Այս իմաստով չափազանց նշանակալից է նաև Փարպեցու հաղորդածը՝ Ատրպատականի Հեր գավառի Նվարսակ գյուղում, Պարսից արքայից արքա Վաղարշի ներկայացուցիչ Նիխորի մատուցած

ընթրիքի ժամանակ, բանակցության եկած ապստամբ հայերը արժանացան պատվավոր ընդունելության, իսկ Պարսից կողմն անցած ուրացող նախարարները արհամարհվեցին իբրև անպիտաններ, – այս է թշնամուն ծառայելու վարձը. «Եւ զնախարարսն որ եկեալ էին ի Մամիկոնենէն Վահանայ՝ սիրով ընկալեալ Նիխորայ և պատուեալ՝ արձակէր ընդ պատգամաւորս իւր առ Մամիկոնեանն Վահան. Մեծաւ պատուիրելով յանձնէր նոցա՝ վաղվաղակի և անյապաղ ածել զՄամիկոնեանն Վահան. և հրաժարեալ զնոսա Նիխորոյ՝ արձակէր սիրով: Եւ տեսեալ զայն աստուածուրաց խաբեբայիցն, որք ի միաբանութեան Պարսկացն էին, թէ ո՛րպէս յապստամբացն եկեալ Հայք ի Նիխորոյ պատուեալք և մեծարեցան ի Պարսկացն, և ինքեանք արհամարհեալք են իբրև զանպիտանս՝ դարձեալք լի ամօթով յերկիր կործանէին» (Փարպեցի, 1904, 163):

Եվ, վերջապես, որքան էլ մտովի տեղափոխվենք V դար և ջանանք տոգորվել ժամանակի կրոնա-բարոյական ոգով, դարձյալ անհնար է համակերպվել ազգային հերոսին որոշ պատմիչների և, հատկապես, Ղազար Փարպեցու վերագրած կրոնական մոլեռանդությանը՝ ժամ առաջ նահատակվելու անկասելի բաղձանքին, միայն թե իր հոգին հավիտենական լույսի մեջ լինի և ընդունի անմահության լուսապսակ, իսկ թե ինչ կլինի իր նահատակվելուց հետո ամեհի թշնամու ձեռքը մատնված հայ ժողովրդի ճակատագիրը, հայրենասեր զորավարի փույթը չէ:

Իհարկե, չպետք է այնքան միամիտ լինել՝ կարծելու համար, թե իրականում Հայոց սպարապետը գիշեր ու ցերեկ քնել-արթնացել է հենց միայն նահատակվելու փափագով: Դա ոչ այնքան պատմիչի, որքան վկայաբան-վարքագրի տեսլականն է: Եվ այս իմաստով Փարպեցին զգալիորեն առանձնանում է այն հեղինակների մեջ, որոնց ջանքերով մեզանում ստեղծվեց, Մ. Աբեղյանի դիպուկ արտահայտությամբ, **կրոնական մաքառման գրականությունը:** Ազգովի նահատակվելու փարպեցիական պաթոսը, երբ ազգը պատկերանում է նրան իբրև հովիվնեբի հետևից աղի վրա վազող ոչխարների հոտ՝ «որպէս հօտք, որ ի ձայն աղի փութայցեն զկնի հովուացն» (Փարպեցի, 1904, 68), որ նահատակություն է տենչում ոչ թե հայրենի երկրի ու հողի ազատության, այլ սեփական անձի երանության պսակի և այս զազրելի կյանքից փրկվելու համար, վկայում է, թե որքա՜ն էր սխալվում Եղիշեի քննադատ Գր. Տեր-Պողոսյանը, երբ իր հրատարակած հոդվածաշարում (Տէր-Պօղոսեան, 1895; 1896) եզրակացնում էր. «Ղազար Փարպեցին աւելի լայն

հայացք, բուն քաղաքական տեսակէտ ունեցող և աւելի արժանահաւատ պատմիչ է, քան թէ Եղիշէն, որը միակողմանի է և խնդրին **կրօնական մեկնութիւն** է տալիս»: Զարմանալին այն է, սակայն, որ այս թյուր կարծիքին համամիտ է նաև Երվանդ Տեր-Մինասյանը, որը շուրջ կես դար հետո Տեր-Պողոսյանի եզրակացության առթիվ գրում է. «Այս հարցում [որ, հակառակ Փարպեցու, Եղիշեն միակողմանի է և խնդրին կրոնական մեկնություն է տալիս – Ա. Մ.] բանասերների մեջ ընդհանուր համաձայնություն է տիրում և վիճելու առիթ չկա» (Տեր-Մինասյան, 1971, 130):

Եղիշեի Վարդան Մամիկոնյանը՝ իբրև սպարապետ և զորական, աշխարհական անձ է՝ իր կոչումով, ըմբռնումներով, ռազմի հմտությամբ, և չի կարող ներկայացվել հոգևորական սքեմի տակ, ինչպես անում է Հրանդ Արմենը: Նրա այն պնդումը, թե Սահակ կաթողիկոսը, արու զավակ չունենալով, իր թոռ Վարդանին մանկությունից պատրաստել էր հոգևոր սպասավորության՝ Լուսավորչի տան ժառանգական իշխանությունը պահպանելու և շարունակելու համար, չի դիմանում քննադատության. «Վարդան պատահաբար չէ, որ բացառիկ կրօնական զգացումով տոգորուած մէկը եղաւ, առաւել քան իր աշխարհական գործակիցները: Սահակ Կաթողիկոս մեծ խնամքով կրօնական կրթութիւն ջամբեց անոր, այն յոյսով թէ օր մը իրեն կը յաջորդէ որպէս հայրապետ, եւ այդպիսով Լուսաւորչի ընտանիքէն չի վերնար կաթողիկոսութիւնը» (Արմէն, 1969, 28):

Երկու պատմիչների ստեղծած Վարդանի կերպարը, անշուշտ, ենթարկվել է կրոնական որոշակի գունազարդման, բայց մեր ժամանակակից պատմաբանն ավելի է խտացնում գույները: Վարդանի կերպարն իր բուն աշխարհիկ էությամբ ընկալելու համար՝ մեզ օգնության է գալիս մի երրորդ անգնահատելի աղբյուր՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որին, ցավոք, այս առնչությամբ չեն անդրադարձել ո՛չ Հր. Արմենը, և ո՛չ էլ այլ հեղինակներ: Սահակ Պարթևը չէր կարող Վարդանին դաստիարակել իբրև կրոնավոր, առավել ևս Լուսավորչի տան ժառանգորդ՝ այն պարզ պատճառով, որ նա տոհմիկ սպարապետների՝ Մամիկոնյանների տան զավակ էր, և ինքն էլ սպարապետի որդի, ուստի և տոհմային **իրավունք** և պարտավորություն ուներ ստանձնելու Հայոց ընդհանուր զորքի զորավարությունը: Վարդանը Համազասպ սպարապետի (Սահակ կաթողիկոսի դստեր ամուսնու) որդին էր, ընդ որում սպարապետության պատիվը Համազասպին շնորհվել էր Պարսից Արտաշիր թագավորից՝ հենց Սահակ կաթողիկոսի

խնդրանքով, ինչպես վկայում է պատմահայր Մովսես Խորենացին (Խորենացի, 1913, 322–324): Իբրև սպարապետի որդի և այդ տիտղոսի ապագա ժառանգորդ՝ Վարդանը դեռ երիտասարդ հասակից ուներ զինվորական աստիճան և իբրև զինվորական էլ ուղեկցում էր Մեսրոպ Մաշտոցին Արևմտյան Հայաստանով Կ. Պոլիս մեկնելիս, որտեղ և Թեոդոս Փոքր կայսրից ստացավ ստրատելատի (զորագլխի) տիտղոս («Թուղթ Թէոդոսի առ Սահակ», Խորենացի, 1913, 335):

Այնուհետև, մոտ 422 թ. Սմբատ ասպետի հետ Վարդան ստրատելատը Տիզբոնում մասնակցեց Վռամշապուհի որդի Արտաշեսին Հայաստանի վրա թագավոր նշանակելու բանակցություններին (Խորենացի, 1913, 352): Իսկ 432/433 թ., Սահակ Պարթևին Տիզբոնի քառամյա արգելանքից արձակելու ժամանակ, Պարսից թագավոր Վռամ Երկրորդը Վարդան ստրատելատին հաստատեց Մամիկոնյան տոհմի տանուտեր (Խորենացի, 1913, 337): Բոլոր այս դրվագներում Վարդան Մամիկոնյանը հանդես է գալիս որպես պետական և ռազմական գործիչ:

Եվ վերջապես, Հր. Արմենի այն թեզը, թե Սահակ կաթողիկոսն իր թոռ Վարդանին «մեծ խնամքով կրօնական կրթութիւն ջամբեց»՝ իրենից հետո հայրապետ կարգելու հույսով, հիմնովին հերքվում է հենց Մովսես Խորենացու վկայությամբ: Երբ ասորի անարգ և ատելի եպիսկոպոսապետ Շամուելի մահից հետո բոլոր հայ նախարարները «գնացին մեծն Սահակի մոտ, իրենց մեղքերը հանձն առնելով՝ աղաչեցին, որ նորից դառնա իր աթոռը [...] ամենքը միասին մուրհակ կնքեցին, որ նույն իշխանությունը նրա թոռներին կտան ժառանգաբար: Բայց նա հանձն չէր առնում: Նրանց շատ թախանձանքներից հարկադրված՝ պատմեց այն տեսիլքը, որով քնի մեջ շատ ժամանակներ առաջ երևացին նրան ապագայում լինելիքները» (Խորենացի, 1913, 354):

Այս տեսիլքը, որ երևացել է Սահակ Պարթևին Վաղարշապատ քաղաքի սուրբ եկեղեցում դեռևս եպիսկոպոս ձեռնադրվելուց առաջ (նախքան 390 թ.), Ղազար Փարպեցին մեկնությամբ հանդերձ զետեղել է իր «Հայոց պատմության» մեջ (Փարպեցի, 1904, 28–37): Ուրեմն Սահակ Պարթևը դեռ երիտասարդ հասակում աստվածային տեսիլքից գիտեր, որ իր տոհմի՝ Լուսավորչի տան կաթողիկոսությունը դադարելու է աստվածային տեսչությամբ, էլ ինչպե՞ս կարող էր նա դրանից հետո Վարդան թոռանը մանկությունից հատուկ հոգևոր կրթության տալ՝ նրան կաթողիկոս դարձնելու համար, հակառակ աստվածային տեսչության. «Նախարարներն այս լսելով և հասկանալով, որ աստվածային հրամանով նրա ազգատոհմի քահանայապետությունը դադարեց, ար-

տասվելով վայ տվին իրենց» (Խորենացի, 1913, 354): Այս ամենը քաջ հայտնի պետք է լիներ Հր. Արմենին, բայց նա հավատավորի եռանդով սևեռվել է միայն իր մտացածին գաղափարին:

Եզրակացություններ

Հայ բանասիրության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկի գրության ժամանակի վերաբերյալ: Ըստ նրանում արտացոլված փաստերի՝ ընդունված է, որ Եղիշեի Վարդանանց Պատմությունը գրված է մոտ 462–465 թթ: Սակայն ավելի քան մեկ դար է, ինչ շարունակվում է Եղիշեի մատյանի և Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» -ի առաջնության շուրջ բանասերների և պատմաբանների մեջ ծավալված բանավեճը: Հայ ազգային մատենագրական դարավոր ավանդույթը միանգամայն հավաստի է ճանաչում Վարդանանց պատմիչ Եղիշեի վկայությունները՝ դեպքերին ականատես լինելու վերաբերյալ: Մեր կատարած անկողմնակալ, մանրախույզ ուսումնասիրությունը բացահայտում է Եղիշեի առաջնությունը Փարպեցու նկատմամբ ոչ միայն ժամանակի առումով, այլև նրանց երկերի բովանդակության մեջ տեղ գտած էական տարբերություններով, որոնք հաստատում են Փարպեցու Պատմության կախումը Եղիշեի բնագրից:

Ալբերտ Ա. Մուշեղյան – բացահայտել և լուսաբանել է մի շարք հիմնարար հարցեր, որ վերաբերում են հայ ժողովրդի ծագումնաբանությանը, պետականաշինությանը, նախամաշտոցյան շրջանի պատմությանը, հայոց գրավոր մշակույթի հիմնավորմանը, հայ հին գրականության՝ հատկապես 5-րդ դարի ժամանակագրության հետ կապված խնդիրներին, և այլն: Ա. Մուշեղյանի մասնագիտական գործունեության կարևոր մասն են կազմում նաև գրականագիտական տարաբնույթ հարցերի քննությունը, ինչպես նաև՝ հայ-գերմանական գրական-մշակութային առնչությունները, գերմանացի հեղինակների երկերի՝ բնագրից կատարված թարգմանությունները:

Գրականության ցանկ

1. **Ագաթանգեղոս (1909).** *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց*: Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց (աշխ)։ Տփղիս: Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի:
2. **Ակինեան, Հ. Ն. Վ. (մասն առաջին, 1932; մասն երկրորդ, 1936; մասն երրորդ, 1960).** *Եղիշէ վարդապետ եւ իր Պատմութիւնն Հայոց պատերազմին, մատենագրական-պատմական ուսումնասիրութիւն*: Վիեննա: Մխիթարեան տպարան:
3. **Աճառյան, Հ. (1945).** Հայկականք Ա. Մեր առաջին պատմագրերի թվականը, «*Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի (հասարակական գիտություններ)*», 3–4 (47–50):
4. **Աճառյան, Հ. (1976).** *Բանասիրական ուսումնասիրություններ*: Երևան: ԵՊՀ հրատ.:
5. **Արմէն, Հրանդ Ք. (1969).** *Հայկական Գերագոյն Ատեան՝ Վասակ Սիւնի (ամբաստանեալ)*: Պէյրութ: Տպ. Կ. Տօնիկեան եւ որդիք:
6. **Գաթրճեան (1887).** Ի գրուածոց **Հ. Յովսեփայ Վ.ի Գաթրճեան**: Հատա-կոտորք, Հինգերորդ դարու չորս հայ պատմագրութեանց ժամանակները: «*Հանդէս ամսօրեայ*», 1:
7. **Գարագաշեան, Ա. Մ.** (**1895**). *Քննական պատմութիւն Հայոց ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական եւ բանասիրական տեղեկութեանց, մասն Դ., Պատմական ժամանակ*: Թիֆլիս: Տպարան Մ. Դ. Ռօտինեանցի:
8. **Եղիշէ (1957).** Եղիշէի *Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին*: Ե. Տէր-Մինասեան (աշխ.): Եր.: Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ.:
9. **Փարպեցի (1904**). Ղազարայ Փարպեցւոյ *Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան*: Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեանց (աշխ.): Տփղիս: Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի:
10. **Ղազար Փարպեցի** (**1982**). *Հայոց պատմութիւն, Թուղթ Վահան Մամիկոնյանին:* Բագրատ Ուլուբաբյան (աշխարհաբար թարգմ. և ծանոթագր.): Երևան: ԵՊՀ հրատ.:
11. **Խորենացի (1913).** Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց: Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան (աշխ.): Տփղիս: Արագատիպ Մնացական Մարտիրոսեանցի:
12. **Մուշեղյան, Ա. Վ. (2007).** *Մովսես Խորենացու դարը*: Եր.: Երևանի Պետական համալսարանի հրատ.:
13. **Մուշեղյան, Ա. (2012).** Գրիգոր Լուսավորչի անվան և պաշտամունքի խորհրդապաշտական արգելքը 430-ական թթ. ասորի կաթողիկոսների օրոք, «*Բանբեր Մատենադարանի*», 19 (21–44):
14. **Տեր-Մինասյան, Ե. (1971)**. *Եղիշեի «Վարդանանց պատմությունը» և նրա քննադատները*, «Պատմա-բանասիրական հետազոտություններ»: Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.:
15. **Տէր-Պօղոսեան, Գր. (1895)**. Եղիշէի Պատմութեան աղբիւրը, «*Հանդէս ամսօրեայ*» (20–23, 58–61, 110–113):

16. **Տէր–Պօղոսեան, Գր. (1896)**. Նկատողութիւններ Եղիշէի Պատմութեան վերաբերեալ, «*Հանդէս ամսօրեայ*» (129, 168, 197, 302):
17. **Փաւստոս (1987**). *Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց*: Ք. Պատկանյան (բնագիր), Ստ. Մալխասյան (թարգմ. և ծանոթագր.): Երևան, Երևանի համալսարանի հրատ.:
18. **Eḷishē (1982).** *History of Vardan and the Armenian War*, R. W. Thomson (translation and commentary). Cambridge, Massachusetts, Harvard University Press, London. England.
19. **Pʿarpecʿi (1991**). *The History of Łazar P'arpec'i*. R. W. Thomson (translation). Atlanta, Georgia. Scholars Press.
20. Адонцъ, Н. **(1908).** *Арменія въ эпоху Юстиніана*, С.-Петербургъ, типографія Императорской Академіи Наукъ.

Bibliography (Latin Script)

1. **Achaṛyan, H. (1945).** Haykakankʿ A. Mer aṛajin patmagreri tʿvakanĕ: "*Teghekagir Haykakan SSṚ Gitutʿyunneri akademiayi (hasarakakan gitutʿyunner)*": 3-4 (47-50) (**in Armenian**).
2. **Achaṛyan H. (1976)**. *Banasirakan usumnasirutʿyunner*: Yerevan: EPH hrat. (**in Armenian**).
3. **Agatʿangeghos (1909)**. *Agatʿangeghay Patmutʿiwn Hayotsʿ*: G. Tēr-Mkrtchʿean ew St. Kanayeantsʿ (ashkh.): Tpʿghis: Aragatip Mnatsʿakan Martiroseantsʿi (**in Armenian**).
4. **Akinean, H. N. V. (masn aṛajin, 1932, masn erkrord, 1936; masn errord 1960).** *Yeghishē vardapet ew ir Patmutʿiwn Hayotsʿ paterazmin, matenagrakan-patmakan usumnasirutʿiwn*: Vienna: Mkhitʿarean tparan **(in Armenian**).
5. **Armēn, Hrand Kʿ. (1969)**. *Haykakan Geragoyn Atean: Vasak Siwni (ambastaneal)*, Pēyrutʿ: Tp. K. Tōnikean ew Ordikʿ (**in Armenian**).
6. **Garagashean, A. M. (1895)**. *Kʿnnakan patmutʿiwn Hayotsʿ ĕst noragoyn patmakan, lezuabanakan ew banasirakan teghekutʿeantsʿ, masn D., Patmakan zhamanak*: Tʿiflis: Tparan M. D. Ṛōtineantsʿi (**in Armenian**).
7. **Gatʿrchean** (**1887**). I gruatsotsʿ **H. Hovsepʿay V.i Gatʿrchean.** Hatakotorkʿ, Hingerord daru chʿors hay patmagrutʿeantsʿ zhamanaknerĕ, "*Handĕs amsōreay*", 1 (**in Armenian**).
8. **Pʿarpetsʿi** (**1904**). *Ghazaray Pʿarpetsʿwoy Patmutʿiwn Hayotsʿ ew Tʿughtʿ aṛ Vahan Mamikonean*: G. Tēr-Mkrtchʿean ew St. Malkhaseantsʿ **(**ashkh.): Tpʿghis: Aragatip Mnatsʿakan Martiroseantsʿi (**in Armenian**).
9. **Ghazar Pʿarpetsʿi (1982).** *Hayotsʿ patmutʿiwn, Tʿughtʿ Vahan Mamikoneanin*: Bagrat Ulubabyani (ashkharhabar tʿargm. ev tsanotʿ.): Yerevan: EPH hrat. (**in Armenian**).
10. **Khorenatsʿ**i (**1913**). Movsisi Khorenatsʿwoy Patmutʿiwn Hayotsʿ: M. Abeghean ew S. Yarutʿiwnean (ashkh.): Tpʿghis: Aragatip Mnatsʿakan Martiroseantsʿi (**in Armenian**).
11. **Musheghyan, A. V. (2007**). *Movses Khorenatsʿu darĕ*: Yerevan: Yerevani Petakan hamalsarani hrat. (**in Armenian**).
12. **Musheghyan, A. (2012**) Grigor Lusavor chʿi anvan ev pashtamunkʿi khorhrdapashtakan argelkʿĕ 430-akan tʿtʿ. asori katʿoghikosneri ōrokʿ: "*Banber Matenadarani*", 19 (21-44) (**in Armenian**).
13. **Ter-Minasyan, Ye. (1971**). *Yeghishei "Vardanantsʿ patmutʿiwnĕ" ev nra kʿnnadatnerĕ,* "Patma-banasirakan hetazotutyunner": Yerevan: Haykakan SSH GA hrat. (in Armenian).

14. **Tēr-Pōghosean, Gr. (1895**). Yeghishēi Patmut‘ean aghbiwrě, “*Handēs amsōreay*” (20-23, 58-61, 110-113) (**in Armenian**).
15. **Tēr-Pōghosean, Gr. (1896**). Nkatoghut‘iunner Yeghishēi Patmut‘ean verabereal, “*Handēs amsōreay*” (129, 168, 197, 302) (**in Armenian**).
16. **P‘awstos (1987).** *P‘awstosi Biwzandats‘woy Patmut‘iwn Hayots‘*: K‘. Patkanyan (bnagir), St. Malkhasyan (t‘argm. ev tsanot‘.): Yerevan: Yerevani hamalsarani hrat. (**in Armenian**).
17. **Yeghishē (1957**). *Yeghishēi Vasn Vardanay ew Hayots‘ paterazmin*: Ye. Tēr-Minasean (ashkh.): Yerewan, Haykakan SSR GA hrat. (**in Armenian**).
18. **Adonts‘, N. (1908).** *Armenia v ēpokhu Yustiniana*: S.-Peterburg: Tipografiya Imperatorskoy Akademii Nauk (**in Russian**).